



ADVANCED
SOCIAL
TECHNOLOGIES

Օգուտների Բաշխման Վերլուծություն

*«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ»
ԾՐԱԳԻՐ*

ԱՌԱՋԱԴԵՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ
ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Երևան, Հայաստան

2010

Օգուտների Բաշխման Վերլուծություն

Բովանդակություն

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	4
ՈԼՈՐՏՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ ԵՎ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	9
ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՊԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ ԵՎ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	11
ՕԳՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ.....	13
ԿԱՏԱՐՎԱԾ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	16
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ.....	17
ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ.....	34
ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՊԼԱՆՆԵՐ.....	36
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	37
Հավելված Ա. Պետական բյուջեի առողջապահության ծրագրեր/ծառայություններ.....	38
Հավելված Բ: Կրթության ոլորտի օգուտների բաշխման հաշվարկի մանրամասներ.....	41
Հավելված Գ: Առողջապահության վրա տնային տնտեսություններ ծախսեր (ըստ հարցման արդյունքների).....	47
Հավելված Դ ՕԲՎ աղյուսակներ GDN ծրագրի դասակարգմամբ (միջազգային համադրության համար).....	49

Սույն հաշվետվությունը փորձում է բացահայտել կրթական, առողջապահական և ջրային ոլորտներում հանրային ծառայությունների բաշխումը բնակչությանը՝ տարանջատված ըստ ծախսային քվինտիլների: Հաշվետվության նպատակն է հասկանալ գոյություն ունեցող բաշխման սխեմաներն ու միտումները և, անհրաժեշտության դեպքում, հիմքեր նախապատրաստել մշակվող ու կառավարության շահառուներին հաղորդակցվող՝ քաղաքականության նախագծերի համար՝ գոյություն ունեցող ոլորտային քաղաքականությունների շտկման անհրաժեշտությունից ելնելով:

Հաշվետվությունը պատրաստվել է Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ ՀԿ կողմից՝ GDN «Հանրային ծախսերի հաշվետվողականության բարելավման նպատակով ինստիտուտների զարգացման» ծրագրի շրջանակներում: Հաշվետվության հեղինակներն են Հայկ Մաղաքյանը (կրթություն), Հովհաննես Մարգարյանը (առողջապահություն), Գևորգ Նազարյանը (ջրային տնտեսություն) և Սուրեն Պողոսյանը (ծրագրի ղեկավար):

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ոլորտների վերաբերյալ օժանդակ տեղեկատվությունը, որը կարող է օգտակար լինել՝ սույն վերլուծությանը լրացուցիչ համատեքստեր ավելացնելու համար, ներկայացված է Ծրագրային Բյուջետավորման Վերլուծության հաշվետվությունում, որն իրականացվել է ԱՄՏ-ի կողմից՝ սույն հաշվետվությանը զուգահեռ:

Հաշվի առնելով այն, որ հնարավոր չէր հայտայտել տեղեկատվություն ըստ ծրագրերի օգուտների բաշխման, ուստի մենք իրականացրեցինք ուսումնասիրություն՝ ԾԲՎ հաշվետվությունում սահմանված ծրագրերի համար քվինտիլները և ծառայությունների սպառումն ըստ յուրաքանչյուր քվինտիլի բացահայտելու նպատակով:

Ուսումնասիրությունը ներառել է ծառայությունների սպառումը 2008թ. և 2009թ. 9 ամիսների ընթացքում: Սույն հաշվետվության մեջ ներկայացված վերլուծությունն անդրադառնում է բոլոր երեք ոլորտների, ինչպես նաև ըստ ծրագրերի բաժանված ծառայությունների տարբեր կողմերին: Սակայն, մենք չենք ներառել Քաղաքականության մշակման և վարչարարության ծառայությունները, քանի որ տնային տնտեսությունները չեն հանդիսանում այդ ծառայությունների ուղղակի շահառուներ:

Գործընթացին օժանդակելու նպատակով մշակվել է հատուկ հարցաշար: Հայաստանի տարբեր մասերից (քաղաքային և գյուղական) հարցմանը մասնակցել են 1600 տնային տնտեսություններ: Քվինտիլները սահմանվել են պարզ բաժանման միջոցով՝ 320 տնային տնտեսություններ¹ յուրաքանչյուր քվինտիլում: Ըստ ծախսային մակարդակների քվինտիլները սահմանվել են հետևյալ կերպ.

<i>Քվինտիլ</i>	<i>Ամսական ծախսեր</i>
Քվինտիլ 1	Մինչև 58700 դրամ
Քվինտիլ 2	58700-94900 դրամ
Քվինտիլ 3	94900-135850 դրամ
Քվինտիլ 4	136000-209100 դրամ
Քվինտիլ 5	209100 դրամ և ավել

Օգուտի բաշխման բացահայտման գործընթացը ներառել է հետևյալ փուլերը.

- Սուբսիդիաների մակարդակի սահմանում ըստ յուրաքանչյուր ծրագրի (ծրագրերը նախապես սահմանվել են ԾԲՎ հաշվետվությունում),
- Սահմանված ծրագրերի համար յուրաքանչյուր ծառայության սպառման մակարդակի վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերում (հարցման արդյունքներ),

¹ 1600 բաժանված 5 քվինտիլներով

- Արդյունքների բաշխում ըստ յուրաքանչյուր քվինտիլի,
- Օգուտի արձանագրման յուրաքանչյուր դեպքի մասնաբաժնի հաշվարկում ընդհանուր ծախսերի մեջ՝ ըստ ծրագրերի և քվինտիլների:

ՕԲՎ ներառված ծրագրերը սահմանելիս մենք կիրառել ենք ՕԲՎ հաշվետվության ծրագրերի կառուցվածքը: Սակայն, ՕԲՎ նպատակների համար բացառվել են ներքին ծառայությունները (կամ աջակից/օժանդակ ծառայությունները), որոնք ուղղակիորեն չեն վերագրվում այն արտաքին ծառայություններին, որոնք տնային տնտեսությունները ստանում են կառավարությունից, օրինակ՝ Քաղաքականության մշակման և վարչարարության ծրագրերը, որոնց ծառայությունների սպառման մակարդակի վերաբերյալ տնային տնտեսությունները չեն կարող տալ լիարժեք արձագանքներ:

Կիրառված մեթոդաբանության և ծրագրերի կառուցվածքի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ստորև:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Օգուտի Բաշխման Վերլուծության նպատակով օգտագործվել է Հայաստանի կրթական հիմնական մակարդակների հետևյալ կառուցվածքը.

Միջնակարգ ընդհանուր կրթություն

1. Տարրական դպրոց
2. Միջնակարգ դպրոց
3. Ավագ դպրոց

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն

1. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն
2. Միջին մասնագիտական կրթություն

Բարձրագույն և հետբուհական կրթություն

1. Բարձրագույն (բակալավրիատ և մագիստրատուրա) մասնագիտական կրթություն
2. Հետբուհական մասնագիտական կրթություն

Կիրառված կառուցվածքը համահունչ է Ծրագրային Բյուջետավորման Վերլուծության մեջ օգտագործված կառուցվածքին: Այդ իսկ պատճառով, ՕԲ վերլուծության միջոցով ստացված՝ պետական բյուջեի հատկացումների արդյունքները և սահմանված ծրագրերի

ընդգրկվածությունները կարող են օգտագործվել ՕԲՎ-ում՝ առանց վերախմբավորումների կամ վերաբաշխումների:

Օգտագործված տվյալների աղբյուրները.

- 2005-2006թթ. մինչև 2008-2009թթ. ուսումնական տարիների համար տարրական, միջին և ավագ դպրոցներում ընդգրկվածության մասին տվյալները ստացվել են Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալների բազայից, որը սպասարկվում էր Կրթական ծրագրերի կենտրոնի կողմից:
- 2005-2006թթ. մինչև 2008-2009թթ. ուսումնական տարիների համար նախնական և միջին արհեստագործական, ինչպես նաև բարձրագույն և հետբուհական կրթական մակարդակներում ուսանողների ընդգրկվածության վերաբերյալ տվյալները ստացվել են ՀՀ պետական վիճակագրական ծառայության «Մոնիթինգային վիճակը Հայաստանում» հրատարակություններից՝ 2005-2008թթ. համար:
- Ընդհանուր պետական բյուջեի ֆինանսավորման և կրթական հաստատությունների ընթացիկ ֆինանսավորման մասին տվյալները՝ 2006-2009թթ. համար, ստացվել են Ծրագրային Բյուջետավորման Վերլուծության աղյուսակներից:
- Ըստ կրթական մակարդակների և տնային տնտեսությունների քվինտիլների փաստացի անհատական ընդգրկվածության մասին տվյալները 2008թ. մայիս, 2008թ. սեպտեմբեր, 2009թ. մայիս և 2009թ. սեպտեմբեր ամիսների համար ստացվել են Առաջադեմ Մոնիթինգային Տեխնոլոգիաներ կազմակերպության կողմից 2009թ. սեպտեմբերին իրականացված՝ տնային տնտեսությունների հարցման տվյալների բազայից, որի ընտրանքի ծավալը կազմել է 6539 անձ:
- Ըստ կրթական մակարդակների և տնային տնտեսությունների քվինտիլների ՏՏ 2008թ. և 2009թ ծախսերի մասին տվյալները ստացվել են նույն տվյալների բազայից:

Փաստացի ընդգրկվածությունն ըստ կրթական մակարդակների.

- Փաստացի ընդգրկվածությունները բոլոր կրթական մակարդակների և բոլոր ուսումնական տարիների համար (2005-2006թթ. մինչև 2008-2009թթ.) իրենցից ներկայացնում են պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորվող սովորողների փաստացի թվաքանակները:
- 2009-2010թթ. ուսումնական տարվա փաստացի ընդգրկվածություններն ըստ կրթական մակարդակների հաշվարկվել են՝ հիմնվելով 2008-2009թթ. ուսումնական տարվա նույն ցուցանիշների վրա՝ դրանք բազմապատկելով յուրաքանչյուր մակարդակի համար 2005-2006թթ. մինչև 2008-2009թթ. արձանագրված՝ ընդգրկվածության միջին տոկոսային փոփոխությունով:
- Ըստ կրթական մակարդակների փաստացի ընդգրկվածությունները 2006-2009թթ. բյուջետային տարիների համար հաշվարկվել են՝ գումարելով նախորդող ուսումնական տարվա փաստացի ներգրավվածության 2/3-ը և հաջորդող ուսումնական տարվա 1/3-ը՝ կրթական յուրաքանչյուր մակարդակի համար:

Օրինակ, տարրական դպրոցներում 2006թ. ներգրավվածությունը հաշվարկվել է գումարելով տարրական դպրոցների աշակերտների՝ 2005-2006թթ. ուսումնական տարվա թվաքանակի 2/3-ը և տարրական դպրոցների աշակերտների՝ 2006-2007թթ. ուսումնական տարվա թվաքանակի 1/3-ը: Այս մեթոդաբանությունը կիրառվում է ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ինչպես նաև տարածքային կառավարման մարմինների (մարզպետարանների) կողմից՝ տարեկան պետական բյուջեները մշակելու նպատակով:

Միավորի սուբսիդիավորման հաշվարկ

Յուրաքանչյուր կրթական մակարդակի համար միավորի սուբսիդավորման մեծությունը 2006-2009թթ. բյուջետային տարիների համար հաշվարկվել է երկու տարբերակով.

- Առաջին տարբերակով, յուրաքանչյուր կրթական մակարդակի ընդհանուր պետական բյուջեի ֆինանսավորման մեծությունները բաժանվել են սովորողների թվաքանակի վրա, այդ թվում՝ բոլոր ընթացիկ ու կապիտալ ֆինանսավորումները, ինչպես նաև որոշակի կրթական մակարդակներին՝ Օրագրային Բյուջետավորման Վերլուծության մեջ օգտագործվող մեթոդաբանությամբ հատկացված օժանդակ ծառայությունների ֆինանսավորումը:
- Երկրորդ տարբերակով, ուսանողների թվաքանակի վրա բաժանվել է միայն ուսուցման գործընթացին առնչվող կրթական հաստատությունների ընթացիկ ծախսերի ֆինանսավորման մեծությունը:
- Միավորի սուբսիդավորման մեծության հաշվարկի երկրորդ տարբերակը կիրառվել է հաշվարկների երկու տարբերակներով ստացված միավորի սուբսիդավորման համեմատության համար՝ վերջինիս մեծության վրա բոլոր կապիտալ և օժանդակ ծառայությունների ծախսերի ընդգրկման ազդեցությունը ցույց տալու նպատակով:
- Օգուտի բաշխման հաշվարկի նպատակով օգտագործվել է միայն առաջին տարբերակով հաշվարկված միավորի սուբսիդավորումը:

Օգուտի բաշխման հաշվարկ

- Օգուտի բաշխման հաշվարկի նպատակներով, ըստ կրթական մակարդակների և տնային տնտեսությունների 1-ից 5 քվինտիլների (1-ամենաաղքատները, 5-ամենահարուստները) ներգրավվածության հարցման արդյունքները խմբավորվել են ըստ 2009թ. սեպտեմբեր, 2009թ. մայիս, 2008թ. սեպտեմբեր և 2008թ. մայիս ամիսների (2009 և 2008թթ. ուսումնական տարիների սկզբի և ավարտի ամսաթվեր):
- Յուրաքանչյուր կրթական մակարդակի ընդհանուր ընդգրկվածության մեծություններում քվինտիլների տոկոսային մասնաբաժինը հաշվարկվել է նշված բոլոր ամսաթվերի համար:

- Դպրոցներում մոտավոր ընդգրկվածության մակարդակներն ըստ ծախսային քվինտիլների և կրթական մակարդակների հաշվարկվել են երկու ձևով.
 - a. Առաջին տարբերակով ըստ յուրաքանչյուր կրթական մակարդակի և քվինտիլի ընդգրկվածությունները բազմապատկվել են բնակչության ընդհանուր թվաքանակով (3 մլն. մարդ) և բաժանվել են հարցման ընտրանքի ծավալի վրա (6539 մարդ);
 - b. Երկրորդ տարբերակում, յուրաքանչյուր կրթական մակարդակի փաստացի ընդհանուր ընդգրկվածությունը՝ ըստ միավորի սուբսիդավորման հաշվարկի համար օգտագործված ուսումնական տարիների, բաշխվել է քվինտիլների միջև՝ հիմնվելով որոշակի կրթական մակարդակում ընդհանուր ընդգրկվածության մեջ քվինտիլների տոկոսային մասնաբաժնի վրա:
 - c. Հաշվարկի երկրորդ տարբերակի իրականացման պատճառն այն էր, որ համաձայն առաջին տարբերակի, առաջին կետում սահմանված ընդհանուր ընդգրկվածության մեծությունն՝ ըստ կրթական մակարդակների, նշված ամսաթվերի համար ավելի բարձր էր, քան ընդգրկվածության առկա փաստացի մեծությունները:
- Ելնելով բերված հիմնավորումներից, դպրոցներում ընդգրկվածության գնահատված մակարդակների հաշվարկի երկրորդ ձևի արդյունքները հիմք ընդունվեցին՝ կրթական ծախսերից ստացվող օգուտների՝ ըստ քվինտիլների և կրթական մակարդակների բաշխման համար:
- Կրթական ծախսերից ստացվող օգուտների՝ ըստ քվինտիլների և կրթական մակարդակների բաշխման նպատակով, դպրոցներում ըստ քվինտիլների ընդգրկվածության գնահատված մակարդակները բազմապատկվեցին յուրաքանչյուր կրթական մակարդակի համապատասխան միավորի սուբսիդիաներով այնպես, որ տարեկան սուբսիդիաների 1/3-ը բաշխվեց սեպտեմբերին (2008 և 2009թթ.), իսկ 2/3-ը՝ մայիսին (2008 և 2009թթ.):
- Կրթական ծախսերի օգուտների՝ ըստ քվինտիլների բաշխման տոկոսային մասնաբաժինները յուրաքանչյուր կրթական մակարդակի ընդհանուր ֆինանսավորումներում հաշվարկվել են առաջին կետում նշված բոլոր ամսաթվերի համար:
- Հարցման տվյալների բազայից ստացված՝ տնային տնտեսությունների ծախսերն ըստ կրթական մակարդակների և քվինտիլների խմբավորվել են 2008 և 2009թթ. համար ու հաշվարկվել են ընդհանուր ծախսերի քվինտիլները և մակարդակները:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունը ներառել է առողջապահության ոլորտի հետևյալ ծրագրերը և ծառայությունները.

1. Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ
2. Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ

3. Հիվանդանոցային ծառայություններ
4. Հանրային առողջապահական ծառայություններ
5. Հարբժշկական ծառայություններ և այլ աջակից ծառայություններ

ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Օգուտներն արձանագրելու նպատակով այս ոլորտում վերլուծվել են հետևյալ ծրագրերը և ծառայությունները.

1. Խմելու ջրի մատակարարում
2. Կոյուղի
3. Ոռոգում

ՕԲՎ աղյուսակները կազմելիս, մենք օգտագործել ենք ԾԲՎ հաշվետվության տվյալները՝ ըստ ծրագրերի ֆինանսական հատկացումների վերաբերյալ: ԾԲՎ-ն հնարավորություն ստեղծեց ագրեգացնել բոլոր ծախսերն ըստ ծրագրերի: Այսպիսով, ընդհանուր բյուջեներն ըստ ծրագրերի ներկայացնում են քաղաքականությունների լիարժեք ծախսերը, ի տարբերություն կառավարության պաշտոնական բյուջետային հաշվետվությունների, որտեղ ծրագրերը բաժանված են բազմաթիվ ենթա-ծրագրերի և միջոցառումների:

Քանի որ սույն հաշվետվության մեջ տվյալները ներկայացված են ՀՀ դրամով, ստորև ներկայացված է փոխարժեքը՝ ըստ տարիների:

	2006	2007	2008	2009 (կանխ.)
ԱՄՆ դոլարի միջին փոխարժեք ²	416.0	342.1	306.0	303.69

ՈԼՈՐՏՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ ԵՎ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բոլոր երեք ոլորտների ֆինանսավորման աղբյուրները սահմանափակված են պետական բյուջեով և դոնորների ֆինանսավորմամբ³: Տեղական ինքնակառավարման

² աղբյուր: “Armenia Economic Report 2009: From Crisis toward New Development”, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

³ Դոնորների կողմից իրականացվող ֆինանսավորումը նույնպես ուղղորդվում է պետական բյուջեի միջոցով, սակայն նման տարանջատման հնարավորությունը օգտակար է ՕԲՎ-ի համար:

մարմինները չեն ֆինանսավորում ո՛չ կրթությունը, ո՛չ առողջապահությունը և ո՛չ էլ ջրային ոլորտի ծրագրերը⁴.

Կրթություն

Պետական կրթական ծրագրերի ֆինանսավորման գլխավոր աղբյուրը կենտրոնական կառավարության բյուջեն է: Որոշ ծրագրեր ներառում են նաև ֆինանսավորում դոնորների կողմից, ինչպիսիք են Համաշխարհային Բանկը, Եվրոպական Հանձնաժողովը, Լինսի Հիմնադրամը և այլոք: ԾԲՎ աղյուսակները ներկայացնում են բոլոր ծրագրերի ֆինանսավորման աղբյուրների մանրամասն բացվածք:

Առողջապահություն

Առողջապահական ծրագրերի ֆինանսավորման հանրային միակ աղբյուրը պետական բյուջեն է: Ինչպես և կրթական ոլորտում, տեղական ինքնակառավարման մարմինները չունեն առողջապահական ծրագրերի ծախսեր:

Ջրային տնտեսության ոլորտ

Աղյուսակներում բերված՝ ոլորտի ծրագրերի ֆինանսավորման աղբյուրներն երկուսն են՝

1. Պետական բյուջե
2. Դոնորների ֆինանսավորում

Ֆինանսավորման միայն երկու աղբյուրների առկայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ջրային ենթակառուցվածքներն հանդիսանում են պետական սեփականություն: 2001թ.-ից սկսած կիրառվում է ջրային համակարգերի օգտագործման իրավունքով տրամադրման ձևը, ինչպես եղավ Երևանի ջրամատակարար ընկերության դեպքում, երբ Երևանի ջրամատակարարման ողջ ենթակառուցվածքը մրցույթով տրամադրվեց վարձակալության:

Ոռոգման համակարգը ևս ամբողջությամբ կախված է պետական բյուջեի և դոնոր աղբյուրների կողմից իրականացվող ֆինանսավորումից: Այստեղ թեև սկսած 2002թ.-ից կատարվեցին լուրջ բարեփոխումներ՝ (նոր ջրային օրենսգրքի և “Ջրօգտագործողների ընկերությունների ու ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին” օրենքի ընդունումը; անցում առևտրային հարաբերություններին, ջրօգտագործողների ընկերությունների ստեղծում - ՋՕԸ), սակայն կառավարությունը դեռևս սուբսիդավորում

⁴ Լինում են որոշ աննշան բացառություններ՝ մասնավոր դոնորների ուղղակի աջակցության կամ նմանատիպ դեպքերում

է ՋՕԸ-ներին՝ ցածր գների ռազմավարությունը պահպանելու նպատակով՝ տեղական սննդամթերքների մատակարարման ռազմավարական խնդիրների և տեղական արտադրության բարձր ինքնարժեքի պատճառով:

Այսպիսով, ստորև ներկայացված է վերը տրված տեղեկատվության ամփոփ աղյուսակը.

	Կրթություն	Առողջապահություն	Ջրային տնտեսություն
Մակարդակ 1: պետական բյուջե	Կրթության և գիտության նախարարություն, մարզպետարաններ, այլ գերատեսչություններ	Առողջապահության նախարարություն, մարզպետարաններ	Ֆինանսների նախարարություն, ՏԿՆ Ջրային տնտեսության պետական կոմիտե
Մակարդակ 2: Տարածքային բյուջեներ	Կիրառելի չէ Հայաստանում ⁵	Կիրառելի չէ	Կիրառելի չէ
Մակարդակ 3: ՏԻՄ բյուջեներ	ոչ ⁶	ոչ	ոչ

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՊԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ ԵՎ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր կողմից իրականացված ՕԲՎ-ի համար հիմնական աղբյուր է հանդիսացել տնային տնտեսությունների հարցումը՝ տնային տնտեսությունների կողմից ծառայությունների սպառման մակարդակի (օգուտների բաշխում) հատուկ ուղղվածությամբ: Հարցաշարը մշակվել էր ՕԲՎ հաշվետվությունով սահմանված ծրագրային կառուցվածքի հետ լիարժեք համապատասխանությամբ:

Օգտագործելով ներքին ուսումնասիրությունների կարողությունը, ԱՍՏ-ն իրականացրել է տնային տնտեսությունների համազգային հարցում, որին մասնակցել են 1600 տնային տնտեսություններ: Հարցումն իրականացվել է 2009թ. սեպտեմբերին՝ 14 քաղաքային և 39 գյուղական բնակավայրերում: Ընտրանքը համամասնորեն բաժանվել էր Երևանի (մայրաքաղաք) և այլ քաղաքային ու գյուղական բնակավայրերի միջև՝ հիմնվելով 2001թ. մարդահամարի տվյալների վրա: Տնային տնտեսությունների ընտրության համար կիրառվել էր բազմաքայլ պատահական ընտրանքի մեթոդաբանությունը:

Հաշվի առնելով Հայաստանում տնային տնտեսությունների ընդհանուր թիվը (788,666՝ համաձայն 2001թ. մարդահամարին), 1600 պատահականորեն ընտրված տնային տնտեսությունների ընտրանքի ծավալը երաշխավորում է 2.5% սահմանային սխալ և 95% վստահության մակարդակ: Ընտրանքը ներկայացուցչական է ոչ միայն ազգային, այլ նաև

⁵ Քանի որ մարզպետարանների բյուջեները կազմում են ՀՀ պետական բյուջեի մաս

⁶ Միայն նախադպրոցական կրթություն (մանկապարտեզներ), որոնք սույն վերլուծության օբյեկտ չեն հանդիսանում

երեք հիմնական մակարդակով. Երևան, այլ քաղաքային բնակավայրեր և գյուղական բնակավայրեր:

կլաստեր	Ընդամենը տնային տնտեսություններ	Ընտրանքի ծավալ	Սահմանային սխալ
Երևան	277,730	551	4.2%
Այլ քաղաքային	242,288	483	4.5%
Գյուղական	258,648	566	4.2%
Ընդամենը	788,666	1,600	2.5%

Ավելին, հարցմանը ընդգրկված/ներգրավված անհատների թիվը կազմել է 6,539 (միջինում 4.1 անդամ մեկ տնային տնտեսությունում, ինչը ճշգրտորեն համընկնում է 2001թ. մարդահամարի տվյալների հետ), որը, հաշվի առնելով 3,200,000 բնակչության թվաքանակը, հնարավորություն ընձեռեց կատարել մեկ շնչի հաշվով բոլոր ազգային էքստրապոլյացիաները 1.2% սահմանային սխալի մեծությամբ:

Տվյալների հավաքագրման համար օգտագործված կառուցվածքային հարցաշարը պարունակում էր հարցեր, որոնք հնարավորություն են տալիս իրականացնել ՕԲ վերլուծությունը երեք ոլորտների համար, ինչպես նաև այլ լրացուցիչ հարցեր, որոնք նախատեսվում է վերլուծել և օգտագործել 2010թ.՝ Ծախս-Օգուտ Վերլուծության ընթացքում:

ՕԳՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Դպրոցում ընդգրկված մեկ ուսանողին հասնող կառավարության հատկացում (1E)

Կրթություն	Միավոր հատկացում (հազ. դրամ)	Միավոր հատկացում (ԱՄՆ դոլար)
Միջնակարգ ընդհանուր կրթություն	205	670
Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթություն	265	866
Բարձրագույն և հետբուհական կրթություն	310	1013

Առողջապահության ոլորտում մեկ շահառուին հասնող կառավարության հատկացում (1E)

Առողջապահություն	Միավոր հատկացում (հազ. դրամ)	Միավոր հատկացում (ԱՄՆ դոլար)
Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	13.67	45
Մանկաբարձա-գինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	64.87	212
Հիվանդանոցային ծառայություններ	57.55	188
Հանրային առողջապահական ծառայություններ	62.87	205
Հարբժշկական և այլ հարակից ծառայություններ	3,321.21	10,854

Ջրային տնտեսությունում մեկ շահառուին հասնող կառավարության հատկացում, (1W)

Ջուր	Միավոր հատկացում (հազ. դրամ)	Միավոր հատկացում (ԱՄՆ դոլար)
Ջրամատակարարման համակարգ	2.73	9
Ջրահեռացման համակարգ	0.23	1
Ոռոգման համակարգ	4.26	14

Կրթության ծառայություններից օգտվելու աստիճանի գնահատում ըստ քվինտիլների և ծրագրերի (2E)⁷

Կրթություն	Ճախսային քվինտիլ
------------	------------------

⁷ Ավելի մանրամասն ներկայացված է Հավելված Բ-ում

	1 (նվազ.)	2	3	4	5 (բարձր.)
Միջնակարգ ընդհանուր կրթություն	103059	93771	90323	79022	54064
Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթություն	4215	5415	7224	5616	3015
Բարձրագույն և հետբուհական կրթություն	1807	2741	3836	5361	8301

Առողջապահության ծառայություններից օգտվելու աստիճանի գնահատում ըստ քվինտիլների և ծրագրերի (2H)

<i>Առողջապահություն</i>	ձախսային քվինտիլ				
	1 (նվազ.)	2	3	4	5 (բարձր.)
Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	313,125	301,875	256,875	279,375	185,625
Մանկաբարձա-գինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	18,750	24,375	9,375	18,750	7,500
Հիվանդանոցային ծառայություններ	73,125	35,625	48,750	63,750	37,500
Հանրային առողջապահական ծառայություններ	5,625	15,000	7,500	9,375	7,500
Հարբժշկական և այլ հարակից ծառայություններ	-	-	3,750	-	-

Ջրի ծառայություններից օգտվելու աստիճանի գնահատում ըստ քվինտիլների և ծրագրերի (2W)

<i>Ջուր</i>	ձախսային քվինտիլ				
	1 (նվազ.)	2	3	4	5 (բարձր.)
Ջրամատակարարման համակարգ	519,375	536,250	545,625	560,625	571,875
Ջրահեռացման համակարգ	133,125	166,875	157,500	144,375	146,250
Ոռոգման համակարգ	446,250	425,625	446,250	446,250	470,625

Կրթության ծառայություններից օգտվելու աստիճանի գնահատում (%) ըստ քվինտիլների և ծրագրերի (3E)

<i>Կրթություն</i>	ձախսային քվինտիլ				
	1 (նվազ.)	2	3	4	5 (բարձր.)
Միջնակարգ ընդհանուր կրթություն	24%	22%	22%	19%	13%
Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթություն	16%	24%	28%	24%	8%

Բարձրագույն և հետբուհական կրթություն	8%	13%	17%	24%	38%
Ընդամենը	23%	22%	22%	20%	14%

Առողջապահության ծառայություններից օգտվելու աստիճանի գնահատում (%) ըստ քվինտիլների ու ծրագրերի (3H)

<i>Առողջապահություն</i>	ծախսային քվինտիլ				
	1 (նվազ.)	2	3	4	5 (բարձր.)
Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	23.4%	22.6%	19.2%	20.9%	13.9%
Մանկաբարձա-գինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	23.8%	31.0%	11.9%	23.8%	9.5%
Հիվանդանոցային ծառայություններ	28.3%	13.8%	18.8%	24.6%	14.5%
Հանրային առողջապահական ծառայություններ	12.5%	33.3%	16.7%	20.8%	16.7%
Հարբժշկական և այլ հարակից ծառայություններ	0.0%	0.0%	100.0%	0.0%	0.0%
Ընդամենը	24%	22%	19%	22%	14%

Ջրի ծառայություններից օգտվելու աստիճանի գնահատում (%) ըստ քվինտիլների ու ծրագրերի (3W)

<i>Ջուր</i>	ծախսային քվինտիլ				
	1 (նվազ.)	2	3	4	5 (բարձր.)
Ջրամատակարարման համակարգ	19%	19.8%	19.9%	20.5%	20.8%
Ջրահեռացման համակարգ	20%	19%	20%	19.9%	21.1%
Ոռոգման համակարգ	17.7%	22.1%	21.2%	19.5%	19.5%
Ընդամենը	19.2%	19.7%	20.1%	20.2%	20.8%

ԿԱՏԱՐՎԱԾ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի տարբերություն ԾԲՎ հաշվետվությանը, ՕԲ վերլուծության ժամանակ մենք օգտագործել ենք երկրի բնակչության փաստացի թվաքանակի մոտարկված մեծությունը, որը կազմել է 3 միլիոն՝ պաշտոնապես գրանցված 3.2 մլն.-ի համեմատ: Սա արվել է յուրաքանչյուր ոլորտում օգուտների բաշխման իրական մակարդակի հետ կապված ռիսկը մեղմացնելու նպատակով:

Ստորև ներկայացված է ՕԲՎ աղյուսակների մշակման նպատակով օգտագործված հիմնական ենթադրությունների ցանկը.

- Ըստ կրթական մակարդակների և ծախսային քվինտիլների սովորողների ընդգրկվածության վերաբերյալ տնային տնտեսությունների հարցման տվյալները ներկայացուցչական են՝ վերլուծությունը Հայաստանի ողջ բնակչության վրա տարածելու համար:
- Քվինտիլների ընդգրկվածության տոկոսային մասնաբաժինները կրթական յուրաքանչյուր մակարդակի ընդհանուր մեծության մեջ հիմնավորված են՝ ծախսային քվինտիլների միջև ըստ մակարդակների փաստացի ընդգրկվածությունների բաշխման մեջ դրանք օգտագործելու համար:
- 2008 և 2009թթ. բնակչության թվաքանակի վերաբերյալ պաշտոնական տվյալներն ավելի բարձր են, քան փաստացի տվյալները:
- Ըստ կրթական մակարդակների և քվինտիլների տնային տնտեսությունների ծախսերի վերաբերյալ հարցման տվյալները բավականաչափ ճշգրտությամբ ներկայացնում են բնակչության կողմից կրթության վրա կատարվող՝ տնային տնտեսությունների (մասնավոր) ծախսերը:
- Օգուտների բաշխման հաշվարկի համատեքստում ջրամատակարարման, կոյուղու և ռոռզման ոլորտներում ըստ հանրային և մասնավոր միացումների տարանջատում չի կատարվել՝ ելնելով երկրում ջրային ենթակառուցվածքների յուրահատկություններից: Ենթադրվել է, որ ուսումնասիրության ընթացքում դիտարկված բոլոր նմանատիպ ենթակառուցվածքները հանրային են, քանի որ դրանք պատկանում են կառավարությանը: Այդպիսով, այն տնային տնտեսությունները, որոնք ջրային համակարգից դուրս են, օգտագործում են մասնավոր միացումներ (խորքային հորեր կամ այլ բնական աղբյուրներ)⁸: Այդ իսկ պատճառով, ծախսերից ստացվող օգուտների բաշխումը չի կարող առնչվել նման դեպքերի հետ:
- Ջրային ոլորտի հետ կապված մեկ այլ ենթադրություն կայանում է նրանում, որ այն դեպքերում, երբ առկա է ծրագրերի շրջանակներում մատուցվող ծառայությունների ուղղակի սպառում, տնային տնտեսություններն ունեն ջրային ոլորտի ծրագրերի ծառայություններին հասանելիության հավասար մակարդակ և, այսպիսով, տնային տնտեսությունների կողմից սպառման չափաբաժինների վերաբերյալ հատուկ կշռում չի տրվել:

⁸ Ծրագրային բյուջետավորման վերլուծության հաշվետվությունը ներկայացնում է պետական և նվիրատու կազմակերպությունների ծախսերից դուրս գտնվող շահառուների քանակի մասին տեղեկատվությունը

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ստորև ներկայացված են արդյունքներն ըստ յուրաքանչյուր ոլորտի, սակայն ընդհանուր պատկերն այն է, որ օգուտների բաշխումն ըստ ծրագրերի շատ տարբեր է և որոշ դեպքերում պատասխաններ տրամադրելու փոխարեն առաջացնում է նոր հարցեր: Որոշ շատ յուրահատուկ դեպքերում առկա են բացահայտումներ, որոնք անհրաժեշտություն են առաջացնում կառավարման մարմինների համար՝ վերանայելու գոյություն ունեցող քաղաքականությունները: Ամեն դեպքում, օգուտի բաշխման վերլուծությունը կարևոր գործիք է և մենք խորհուրդ ենք տալիս կառավարման մարմիններին օգտագործել այդ գործիքը՝ հետագա վերլուծությունների և քաղաքականությունների մշակման իրենց գործընթացներում:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ընդգրկվածություններ կրթական մակարդակներում

Ինչպես ցույց են տալիս միջնակարգ ընդհանուր, արհեստագործական և բարձրագույն կրթության ընդգրկվածության ցուցանիշների վերաբերյալ աղյուսակները, կրթության այս ագրեգացված մակարդակները դրսևորել են փոփոխման տարբեր միտումներ 2005-2006թթ. և 2009-2010թթ. ուսումնական տարիների ժամանակահատվածների համար: Այդ տարբերությունները վերլուծված են ստորև.

- Նշված ժամանակահատվածի ընթացքում ընդհանուր ընդգրկվածությունը միջնակարգ ընդհանուր կրթության ոլորտում նվազել է մոտ 471000 աշակերտից մինչև 393000 աշակերտ: Նման նվազման պատճառը ծնունդների մակարդակի անկումն է և 90-ական թթ. սկսված՝ բնակչության լայնամասշտաբ արտագաղթը՝ ավելի լավ աշխատանք և կենսապայմաններ ունենալու նպատակով;
- Արհեստագործական կրթության մեջ ընդգրկվածության 8% աճը (մոտ 24000-ից մինչև մոտ 26000 ուսանող) պայմանավորված է պահանջարկի և առաջարկի փոփոխությամբ. աճել է բնակչության պահանջարկը արհեստագործական կրթության ծառայությունների նկատմամբ, որոնք հիմնականում ֆինանսավորվում են պետական բյուջեից, ինչպես նաև աճել է նախնական մասնագիտական (արհեստագործական) հաստատությունների թիվը՝ 24-ից հասնելով 28-ի;
- Պետության կողմից ֆինանսավորվող՝ համեմատաբար կայուն ընդգրկվածությունը բարձրագույն կրթության ոլորտում պայմանավորված է կառավարության քաղաքականությամբ, այն է՝ չավելացնել պետության կողմից ֆինանսավորվող տեղերի քանակը, որը և իր հերթին հանգեցրել է բարձրագույն կրթության ընդգրկվածության ընդհանուր ցուցանիշներում պետական ֆինանսավորմամբ ընդգրկվածության մասնաբաժնի նվազմանը 27%-ից մինչև 21%:

Միավորի սուբսիդիաներ

Ինչպես ցույց են տալիս միավորի սուբսիդիաների հաշվարկի աղյուսակները, 2006-2009թթ. ժամանակահատվածում գրանցվել է սովորողների սուբսիդիաների կայուն աճ. Հայաստանի կրթական համակարգում մեկ սովորողի հաշվով պետական ֆինանսավորման ընդհանուր գումարի միջին տարեկան տոկոսային աճը (ներառյալ կապիտալ և օժանդակ ծառայությունների ծախսերը) կազմել է մոտ 23%, ընդ որում, աճն միջնակարգ ընդհանուր, արհեստագործական ու միջին, ինչպես նաև բարձրագույն կրթության ոլորտներում եղել է համապատասխանաբար՝ 24%, 31% և 15%: Այս աճը միջնակարգ ընդհանուր կրթության մեջ ընդգրկվածության մակարդակի նվազման և կրթական համակարգը՝ սկսած 2003թ. կառավարության ծախսերի գերակա ոլորտ հայտարարելու ազդեցությունների համակցված արդյունքն է:


ԾԲՎ իրականացման արդյունքում ստացված՝ կրթության ընդհանուր ծախսերի հիմքի վրա հաշվարկված միավորի սուբսիդիաների և կառավարության կողմից միավորի ծախսի վերլուծության համար օգտագործվող՝ կրթական հաստատությունների ընթացիկ ծախսերի համեմատությունը ցույց է տալիս, որ բոլոր կրթական ծախսերը ներառող միավորի սուբսիդիաները միջինում 40% ավելի բարձր են, քան նրանք, որոնք ներառում են միայն հաստատությունների ընթացիկ ծախսերը: Օրինակ, 2006թ. ընդհանուր միավորի սուբսիդիաները միջնակարգ ընդհանուր կրթության մասով կազմել են մոտ 140 հազար ՀՀ դրամ, այն դեպքում, երբ նույն տարվա համար միավորի ընթացիկ սուբսիդիան կազմել է 97 հազար ՀՀ դրամ: 2009թ. նույն մեծությունները կազմել են 266 հազար ՀՀ դրամ՝ 188 հազար դրամի դիմաց: Այս համեմատությունը ցույց է տալիս, որ ԾԲՎ կիրառված մեթոդաբանությունն ավելի ճշգրիտ է արտացոլում մեկ սովորողի հաշվով պետական ծախսերը, քան ներկայումս օգտագործվող մեթոդաբանությունը:

Օգուտի բաշխում


Օգուտի բաշխման աղյուսակներում առկա հաշվարկների վերլուծությունը արտացոլված է ստորև տրված բացահայտումներում.

- Միջնակարգ ընդհանուր կրթության ոլորտում ընդգրկված աշակերտների թվաքանակը նվազում է ըստ քվինտիլների – ամենաշատը առկա է քվինտիլ 1-ում, իսկ ամենաքիչը քվինտիլ 5-ում: Այս միտումը նույնն է՝ կիրառված բոլոր 4 ժամանակահատվածների դեպքում (մայիս 2008թ, սեպտեմբեր 2008թ, մայիս 2009թ, սեպտեմբեր 2009թ.):

Միջնակարգ կրթության ընդգրկվածություն ըստ քվինտիլների, 2008




Միջնակարգ կրթության ընդգրկվածություն ըստ քվինտիլների, 2009




Այս բացահայտումը բացատրվում է ավելի մեծ քվինտիլներում տնային տնտեսությունների ավելի փոքր չափերով: Այս փաստը ներկայացված է ստորև տրված գծապատկերում.

Տնային տնտեսության միջին չափսը ըստ քվինտիլների, 2009



Հետաքրքրական է, որ (ի տարբերություն մեր ակնկալիքներին) ավագ դպրոցներում ընդգրկվածությունն ուղղակիորեն կորրելացված չէ բոլոր քվինտիլների ծախսերի մակարդակների հետ, այսինքն՝ ակնկալվող “ավելի բարձր քվինտիլ - ավելի բարձր ընդգրկվածություն” հիպոթեզը չի ապացուցվում՝ համեմայնդեպս 2008 և 2009թթ. տվյալների մասով (տես ստորև):


Ավագ դպրոցում ընդգրկվածությունը 2008 և 2009 թթ.



Սակայն, մենք չունենք այս մոդելի բացատրությունը (հատկապես առ այն, որ վերջինս չի համապատասխանում բարձրագույն կրթությունում ընդգրկվածության մոդելին (տես ստորև), քանի որ ավագ դպրոց դիմողներից շատերը, բնականաբար, ցանկություն կունենան շարունակել ուսումը բարձրագույն կրթության ոլորտում): Ինչևէ, հնարավոր բացատրություն կարող է հանդիսանալ այն փաստը, որ ավագ դպրոցների ինստիտուցիոնալ բարեփոխումների վերջին նախաձեռնությունները դեռևս չեն ազդել ընդգրկվածության մակարդակի վրա և դա է պատճառը, որ ավագ դպրոցներում ընդգրկվածությունը մոտ է միջնակարգ ընդհանուր կրթության ոլորտում առկա մոդելին. միակ շեղումն ամենաաղքատ քվինտիլում է և, այդպիսով, այս տրամաբանությունը տեղավորվում է սկզբնական հիպոթեզի շրջանակներում:

Ամեն դեպքում, հարցման տվյալները ցույց են տալիս, որ առկա է միջնակարգ ընդհանուր կրթության ոլորտում կառավարության ծախսերի դիմաց օգուտների ուժեղ շեղում դեպի ավելի աղքատ քվինտիլները:


- Միջնակարգ ընդհանուր կրթության ոլորտում ընդգրկված աշակերտների թիվը նվազում է դիտարկված բոլոր 4 ժամանակային միջակայքերում՝ գրեթե բոլոր քվինտիլների դեպքում: Այս բացահայտումը բացատրվում է վերը քննարկված՝ բնակչության ժողովրդագրական փոփոխություններով: Նվազումն արտացոլվում է նաև կրթության մեջ ընդհանուր ընդգրկվածության առումով, քանի որ միջնակարգ ընդհանուր կրթությունն ունի ամենամեծ համամասնությունը՝ կրթության ոլորտում ընդհանուր ընդգրկվածության մեջ:
- Արհեստագործական, միջին և բարձրագույն կրթություններում ընդգրկվածության աճը ժամանակահատվածների ընթացքում արտացոլում է արհեստագործական, միջին և բարձրագույն կրթության նկատմամբ ավելի բարձր պահանջարկը, ինչը պայմանավորված է ավելի բարձր եկամուտներ և ավելի լավ աշխատանքային պայմաններ ունենալու ցանկությամբ:



Սակայն, ըստ քվինտիլների ընդգրկվածության մասնաբաժիններն այս երկու ոլորտներում շատ տարբեր են: Եթե ընդգրկվածության ընդհանուր մոդելը նախնական և միջին մասնագիտական կրթության պարագայում տրամաբանական է և տնտեսապես (ուսոցիալապես) ընդհանուր առմամբ ընդունելի, ապա բարձրագույն կրթության մոդելը


տրամաբանական է, սակայն սոցիալական տեսանկյունից չափազանց էքստրեմալ է: Հավատացած ենք, որ սա կարող է հանդիսանալ այն ոլորտը, որտեղ պետական մարմինները պետք է մտահոգվեն համակարգի կողմից ստեղծված՝ աղքատների՝ աղքատ մնալու արատավոր շրջանով, որտեղ կառավարությունը դրան համապատասխան ուշադրություն, կարծես թե, չի դարձնում:

Բարձրագույն կրթության ծառայությունների բաշխումը ըստ քվինտիլների



- Բարձրագույն կրթությունում ընդգրկված ուսանողների թվաքանակը բոլոր ժամանակային միջակայքերում զգալիորեն աճում է ծախսային քվինտիլների երկայնքով (միջինում, քվինտիլ 1-ի 8%-ից մինչև 37%՝ քվինտիլ 5-ում): Այս միտումն արտացոլում է աղքատների և հարուստների անհավասար հնարավորությունները՝ համալսարաններ ընդունվելու համար ավելի լավ պատրաստվելու առումով, ինչպես նաև բարձրագույն կրթության համար պետական սուբսիդիաների հատկացման գործընթացում աղքատներին միտված պետական քաղաքականության պակասը:
- Կրթական ծախսերի օգուտների բաշխման վերլուծությունը ցույց է տալիս կրթության ընդհանուր ծախսերի մասնաբաժնի նվազում քվինտիլների երկայնքով, որը ճիշտ է ժամանակային բոլոր միջակայքերի համար: Դա նշանակում է, որ ամենաաղքատ քվինտիլը ստանում է պետական կրթական ծախսերի ամենամեծ բաժինը (մոտ 23%), իսկ ամենահարուստ քվինտիլը ստանում է այդ ծախսերի ամենափոքր բաժինը (մոտ 14%): Սա ավելի շատ քվինտիլներում ընդգրկված տնային տնտեսությունների չափերի տարբերության արդյունք է, որի մասին նշվել է սույն բաժնի առաջին կետում, քան թե՛ դեպի աղքատները միտված՝ կրթական ծախսերի հետ կապված սիստեմատիկ պետական քաղաքականության հետևանք:

Կրթության ոլորտում օգուտների բաշխվածքը ըստ քվինտիլների



ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Մենք փորձել ենք սույն հաշվետվությունում ներառել օգուտների բաշխման հնարավորինս շատ կողմեր: Մասնավորապես, փորձել ենք գնահատել և վերլուծել ըստ քվինտիլների օգուտների բաշխման տարբերությունները ոչ միայն ՕԲՎ հաշվետվության պահանջների շրջանակներում, այլ նաև լրացուցիչ ասպեկտներում, ինչպիսիք են դինամիկան և համեմատական բաշխումը քաղաքային և գյուղական շրջանների միջև, և այլն:


Ստորև ներկայացված է ծնունդների պարզ բաժանում ըստ քվինտիլների և տարիների.

քվինտիլներ	Ծնունդների քանակը (ըստ հարցման արդյունքների)		Ծնունդների քանակը (ըստ հարցման արդյունքների), %	
	2009 (9 ամիս/12 ամիս ⁹)	2008	2009 (9 ամիս)	2008
1	18/24	26	26%	29%
2	12/16	30	17%	34%
3	16/21	18	23%	20%
4	17/23	7	24%	8%
5	7/9	8	10%	9%
Ընդամենը	70/93	89	100%	100%

Հետաքրքրական է, որ նշված տվյալները անուղղակիորեն ապացուցում են վերը նշված՝ կրթության ոլորտում աղքատներին օգուտների չկանխամտածված բաշխումը

⁹ Օգտագործվել է 9 ամսվա վիճակագրության պարզ էստրապոլացիա 12 ամսվա կանխատեսման համար

(ընդհանուր կրթության մասով), քանի որ ավելի աղքատ քվինտիլները ոչ միայն ունեն երեխաներին ուղղված ծառայությունների օգտագործման ավելի մեծ մասնաբաժին, այլև նման միտումներ են ապահովում նաև մոտ ապագայի համար: Սակայն, ինչպես ցույց են տալիս լրացուցիչ մանրամասները, հնարավոր է որոշ բարելավում՝ քվինտիլներում երեխաների ծնունդների հավասարակշռման առումով:



Չնայած նրան, որ կա ծնունդների թվի որոշակի աճ (2009թ. 9 ամիսների վիճակագրության պարզ տարածում), առկա է նաև հետաքրքիր փոփոխություն քվինտիլների ներսում: 2-րդ քվինտիլից վերև ծնունդների նկատելի աճ է գրանցվել: Երկու տարիների դինամիկան չափազանց կարճ է նման եզրակացություններ անելու համար, սակայն դա արդեն իսկ գործոն է, որը ոլորտային և շահառուներին առնչվող քաղաքականություններ մշակողները պետք է հաշվի առնեն՝ երկարաժամկետ քաղաքականություններ նախագծելիս:

Ստացվող մեկ այլ եզրահանգում կարող է հանդիսանալ այն, որ նման աճը պայմանավորված է տնտեսությունում առկա ընդհանուր առմամբ դրական միտումներով¹⁰ և մասնավորապես՝ սույն ենթա-ոլորտի քաղաքականության գերակայությունների սահմանման աճով: Համաձայն ՀՀ առողջապահության նախարարություն տվյալների, ծննդօգնության հետ կապված ծառայությունները զգալիորեն ավելի հասանելի են դարձել բնակչության բոլոր խավերին: Բնականաբար, եթե ֆինանսական ասպեկտները կարևոր դեր խաղային ընտանիքի պլանավորման հարցում, ապա մենք ականատես կլինեինք հակառակ միտումին, քանի որ նման քաղաքականության ազդեցությունն ավելի ցածր քվինտիլների վրա ամենաուժեղը կլիներ, սակայն կարելի է տեսնել, որ ամենալավ արձագանքը գրանցվել է միջին


¹⁰ 2008-2009թթ. տնտեսական ճգնաժամը դեռևս չէր կարող ազդել երեխաների՝ 2008-2009թթ. ծնունդների թվի վրա: Եթե 2010թ. իրականացվի նմանատիպ վերլուծություն, ապա կարելի է կատարել ավելի ծանրակշիռ եզրակացություն:

մակարդակում: Այդ իսկ պատճառով, նմանապես վերապահում կատարելով ըստ տարիների օգուտների արձանագրության չափազանց կարճաժամկետ վիճակագրության վերաբերյալ, կարելի է այնուամենայնիվ նշել, որ մեր կողմից կատարված հարցումը դեռևս չի ապացուցում այն ենթադրությունը, որ նոր քաղաքականություններն ապահովում են հատուկ ֆինանսական շահագրգռվածության էֆֆեկտ և, որ ամենազգալի արձագանքը եղել է հատկապես աղքատ բնակչության կողմից: Ավելի հավանական է, որ նոր քաղաքականությունը դրականորեն է ազդել այդ ծառայությունների հասանելիության վրա և բարձրացրել է այն, սակայն ֆինանսական գործոնն այստեղ առանցքային չէ:

Բնակչությանը մատուցվող լիովին կամ մասնակիորեն անվճար ծառայություններ

Հետաքրքրական է, որ համաձայն 2009թ. 9 ամիսների վիճակագրությանը, առկա է առողջապահական ծառայությունների համար դիմումների մոտ 40% աճ: **Անվճար կամ մասնակիորեն անվճար ծառայությունների մեծ մասը ստացել են երկու ամենացածր քվինտիլները: Նման մոդելը գրանցվել է ն' բոլոր անվճար կամ մասնակիորեն անվճար ծառայությունների, և' ըստ ծրագրերի ծառայությունների անհատական տիպերի դեպքում:** Սա նշանակում է, որ բնակչության ամենաաղքատ հատվածների հատուկ աջակցությանը և նրանց մասին հոգ տանելուն ուղղված կառավարության քաղաքականություններն ապացուցված արձագանք են ստանում հարցման մասնակիցների կողմից: Սա հատկապես դրական է, քանի որ կառավարությունն այդ մտադրությունը սահմանել էր իր ՄԺԾԾ-ում և վերջին տարիների բյուջետային փաստաթղթերում, սակայն նման հայտարարությունների դիմաց չկային բավարար օբյեկտիվ ապացույցներ շահառուների կողմից:

Ծառայության շահառուները ըստ քվինտիլների




Հավատացած ենք, որ կառավարության մեր գործընկերները հատկապես ուրախ կլինեն ստանալ նման ապացույցներ հասարակական հատվածից, սակայն ցանկանում ենք շեշտել նման գործիքների կարևորությունը՝ հետագայում քաղաքականությունների մշակման և որոշումների կայացման գործընթացներում:

Մյուս կողմից, ամենախոցելի խմբերում (ամենացածր քվինտիլներ) առկա է հիվանդացության շատ ավելի բարձր մակարդակ: Այս կարծիքն առաջ է քաշվել ոլորտի փորձագետների կողմից: Այդ իսկ պատճառով, ստանալով աղբատներին ուղղված քաղաքականությունների արդյունավետության և դեպի թիրախներն ուղղվածության բարձր մակարդակի վերաբերյալ վերը նշված ապացույցները, կառավարությունը նաև պետք է արձագանքի բերված կարծիքին՝ ներկայացնելով ավելի թիրախավորված քաղաքականությունների նախաձեռնություններ՝ խնդրին լուծում տալու նպատակով:


քվինտիլներ	Ամբողջական կամ մասնակի անվճար բուժօգնություն ստացողների թվաքանակը		Ամբողջական կամ մասնակի անվճար բուժօգնություն ստացողների տեսակարար կշիռը ըստ քվինտիլների	
	2009	2008	2009	2008
1	211	137	24%	22%
2	199	133	23%	22%
3	169	113	19%	18%
4	181	131	20%	21%
5	123	97	14%	16%
Ընդամենը	883	611	100%	100%

Վերևում բերված աղյուսակը ցույց է տալիս, որ անվճար և մասնակիորեն անվճար ծառայությունների՝ ըստ քվինտիլների շահառուների մասնաբաժինների առումով 2008 և 2009թթ. միջև նկատվում է փոքր տարբերություն:

Ամբողջական կամ մասնակի անվճար բուժօգնություն ստացողների տեսակարար կշիռը ըստ քվինտիլների, 2009



Ամբողջական կամ մասնակի անվճար բուժօգնություն ստացողների տեսակարար կշիռը ըստ քվինտիլների, 2008



Ստորև տրված աղյուսակներում ներկայացվում է 2008 և 2009թթ. ծառայությունների սպառման բաժանումն ըստ շահառուների քվինտիլների և ծառայությունների/ծրագրերի տեսակների:

Քվինտիլ	Ըստ տեսակների առողջապահական ծառայություններից օգտվածների տեսակարար կշիռը 2009թ					Ընդամենը
	Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	Հիվանդանոցային ծառայություններ	Հանրային առողջապահական ծառայություններ	Հարբժշկական և այլ հարակից ծառայություններ	
1	23%	24%	28%	13%	0	23,8%
2	23%	31%	14%	33%	0	21,9%
3	19%	12%	19%	17%	100%	18,9%
4	21%	24%	25%	21%	0	21,5%
5	14%	10%	14%	17%	0	13,8%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%

Քվինտիլ	Ըստ տեսակների առողջապահական ծառայություններից օգտվածների տեսակարար կշիռը 2008թ					Ընդամենը
	Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	Հիվանդանոցային ծառայություններ	Հանրային առողջապահական ծառայություններ	Հարբժշկական և այլ հարակից ծառայություններ	
1	25%	19%	20%	0%	0	23,5%
2	21%	43%	12%	33%	0	21,2%
3	18%	5%	26%	13%	0	18,2%
4	19%	29%	27%	38%	0	21,3%
5	16%	5%	16%	17%	0	15,9%
Ընդամենը	100%	100%	100%	100%	0%	100%

5-րդ քվինտիլի կողմից առողջապահական հանրային ծառայությունների սպառումը ոտումնասիրվող երկու տարիների ընթացքում նվազել է: Քվինտիլների մեջ հարուստների մասնաբաժինը 2009թ. կազմել է 13.8 %, մինչդեռ 2008թ. այն եղել է 15.9%:

Հարցումը նաև տեղեկություններ է տրամադրել երկրում առողջապահական ծառայությունների մասնաբաժինների մեկ այլ ասպեկտի վերաբերյալ: Մասնավորապես, ծառայությունների սպառման ամենամեծ մասնաբաժինը գրանցվել է այն հատվածներում, որոնք կառավարության կողմից հայտարարվել են գերակա, օրինակ՝ առողջության առաջնային պահպանման, հիվանդանոցային և ծնունդների/հղիության հետ կապված ծառայություններ: Այս բաժանման սահմաններում, բնակչությանը մատուցված ծառայությունների ամենաբարձր ցուցանիշները պատկանում են առողջության առաջնային պահպանմանը, ինչը լիովին համընկնում է առողջապահության ոլորտում կառավարության ամենամեծ առաջնահերթության հետ, այն է՝ հիվանդությունների կանխարգելում և բուժում սկզբնական փուլերում:

Առողջապահական ծառայությունների տեսակները	Հարցված բնակչության հաշվով առողջապահական ծառայություններից օգտվածների տեսակարար կշիռը		Առողջապահական ծառայություններից օգտվածների հաշվով ծառայությունների տեսակարար կշիռը	
	2009	2008	2009	2008
Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	77.6%	79.0%	10.9%	7.8%
Մանկաբարձա-գինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	4.6%	3.3%	0.6%	0.3%
Հիվանդանոցային ծառայություններ	15.0%	14.0%	2.1%	1.4%
Հանրային առողջապահական ծառայություններ	2.6%	3.7%	0.4%	0.4%
Հարբժշկական և այլ հարակից ծառայություններ	0.2%	0.0%	0.0%	0.0%
Ընդամենը	100%	100%	14.1%	9.8%

Հարցման մասնակիցների (6539 մարդ՝ 1600 տնային տնտեսություններում) 14.1%-ը ստացել է առողջապահական ծառայություններ 2009թ., իսկ 9.8%-ը՝ 2008թ.: Թվաքանակի փոփոխությունը կարող է պայմանավորված լինել հասանելիության մակարդակի բարձրացումով (հատկապես առողջության առաջնային պահպանման ծառայությունների մասով, ինչը, հավանաբար, վերջին տարիներին իրականացված՝ քաղաքականությունների զգալի փոփոխությունների արդյունքն է): Սակայն, դա կարող է

նան խոսել բնակչության առողջության մակարդակի ընդհանուր անկման մասին: Վերը նշված հայտարարությունների ճշգրտությունը ստուգելու նպատակով անհրաժեշտ կլինի իրականացնել ընդգրկուն հետազոտություններ:

Վերլուծության ևս մեկ հարթություն է հանդիսանում ըստ քաղաքային և գյուղական հատվածների ծառայությունների բաշխման ուսումնասիրությունը: Դա նպատակ ունի գնահատել առողջապահության հասանելիության մակարդակը նշված երկու կատեգորիաներում, քանի որ այն նույնպես հանդիսանում է կառավարության քաղաքականության օրակարգային խնդիր:

Ծննդօգնության և անվճար կամ մասնակիորեն անվճար ծառայությունների բաշխումն ըստ քաղաքային և գյուղական հատվածների ներկայացված է ստորև բերված աղյուսակում: Վերջինս ցույց է տալիս, որ ծառայություններ ստացողների մեծ մասը քաղաքաբնակ են, սակայն նույնպիսին է նաև բնակչության ընդհանուր բաշխվածությունը: Ընդհանուր դիտարկումն այն է, որ կառավարության ծննդօգնության և առողջապահական ծառայությունների բաշխումն ըստ գյուղական և քաղաքային հատվածների արտացոլում է երկրի ընդհանուր պատկերը (2008թ. ծնունդների մասով որոշ շեղումներով, տես ստորև ներկայացված աղյուսակը):

Այսպիսով, չնայած փորձագետները պնդում են, որ առկա է ծառայությունների միգրացիա դեպի քաղաքային հատվածներ, հարցումն այնուամենայնիվ չապացուցեց այդ փաստը, համենայնդեպս՝ առողջապահական ծառայությունների ընդհանուր մակարդակի համար:

Հարցվածները ըստ քաղաքային ու գյուղական բնակչության	Հարցված բնակչության թվաքանակը	Ծնունդների թիվը 2009թ.	Ծնունդների թիվը 2008թ.	Ամբողջական կամ մասնակի անվճար բուժօգնություն ստացողների թվաքանակը 2009 թ.	Ամբողջական կամ մասնակի անվճար բուժօգնություն ստացողների թվաքանակը 2008 թ.
քաղաքային	4066	45	50	533	382
գյուղական	2473	25	39	350	229
Ընդամենը	6539	70	89	883	611
քաղաքային	62%	64%	56%	60%	63%
գյուղական	38%	36%	44%	40%	37%

2009	Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	Հիվանդանոցային ծառայություններ	Հանրային առողջապահական ծառայություններ	Հարբժշկական և այլ հարակից ծառայություններ
քաղաքային	431	31	71	17	1
գյուղական	282	11	67	7	1
Ընդամենը	713	42	138	24	2

քաղաքային	60%	74%	51%	71%	50%
գյուղական	40%	26%	49%	29%	50%

2008	Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	Հիվանդանոցային ծառայություններ	Հանրային առողջապահական ծառայություններ	Հարբժշկական և այլ հարակից ծառայություններ
քաղաքային	312	18	46	13	0
գյուղական	196	3	44	11	0
Ընդամենը	508	21	90	24	0
քաղաքային	61%	86%	51%	54%	0%
գյուղական	39%	14%	49%	46%	0%

Բավականին հետաքրքիր է, որ ի տարբերություն կառավարության կողմից ամբողջությամբ կամ մասնակիորեն վճարվող ծառայությունների, տնային տնտեսությունների սեփական ծախսերն առողջապահության վրա զգալիորեն ավելի բարձր են (ծախսերի մոտ 75%-ը կատարվում է բնակչության 40%-ի կողմից) 4-րդ և 5-րդ քվինտիլներում (2009թ. համար հատկապես 5-րդ քվինտիլում)¹¹: Այս բացահայտումը մասնակիորեն նվազեցնում է վերը նշված փորձագիտական ենթադրությունն առ այն, որ ամենաաղքատ հատվածներն ունեն առողջապահության հետ կապված խնդիրների զգալիորեն ավելի բարձր մակարդակ: Համենայնդեպս, տնային տնտեսությունների սեփական ծախսերի աղյուսակը ցույց է տալիս, որ երկու ամենաբարձր քվինտիլներում նույնպես առկա է առողջապահական խնդիրներին ֆինանսական արձագանքների մեծ բաժին: Կարող է պարզվել, որ երկու ամենաբարձր քվինտիլները հիմնականում նախընտրում են վճարովի ծառայությունները՝ դրանց ավելի բարձր պոտենցիալ որակի պատճառով:

Որոշ առողջապահական ծառայությունների դեպքում, սակայն, դրանց անվճար սպառումը հասանելի է միմիայն ամենաաղքատ քվինտիլների ներկայացուցիչներին և դա կարող է նույնպես գործոն հանդիսանալ՝ Հայաստանում առողջապահական ծառայությունների՝ դեպի աղքատներն այդչափ բարձր ուղղվածության համար: Այն տվյալները, համաձայն որոնց տնային տնտեսությունների սեփական ծախսերի մեծամասնությունը վճարվում են հիվանդանոցային ծառայությունների համար (չնայած, շահառուների թիվը զգալիորեն ավելի բարձր է առողջության առաջնային պահպանման ծառայություններում) կարող են օժանդակել այս մոտեցմանը:

Ամեն դեպքում, չնայած նրան, որ առողջապահական օգուտների բաշխման ընդհանուր մոդելը միտված է դեպի աղքատները, սակայն ոլորտը բավականին բարդ է և կառավարությունը պետք է նախաձեռնողական կերպով արձագանքի առողջապահական ծառայությունների սոցիալական ասպեկտների մարտահրավերներին:

¹¹ Ավելի մանրամասն ներկայացված է Հավելված Գ-ում

ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Տնային տնտեսություններում խմելու ջրի միջին սպառումը կազմում է ամսական 1695 ՀՀ դրամ կամ ՏՏ ընդհանուր ծախսերի 1.08%: Միաժամանակ, ոռոգման վրա կատարվող միջին ծախսերը կազմում են 866 ՀՀ դրամ կամ 0.5%:

Ջրային ծառայություններից օգտվողների տեսակարար կշիռը՝ ըստ ծախսային քվինտիլների և ջրային ծառայությունների տեսակների					
%	1 (նվազ)	2	3	4	5 (բարձր.)
Ջրամատակարարման համակարգ	86.9	90.3	90.9	93.8	95.3
Ջրահեռացման համակարգ	74.4	70.9	74.4	74.1	78.4
Ոռոգման համակարգ	22.2	27.8	26.6	24.4	24.4


Տնային տնտեսությունների յուրաքանչյուր քվինտիլին բաժին ընկնող օգուտների (պետական ծախսերի կամ սուբսիդիաների) մակարդակը՝ ըստ ջրային ծառայությունների տեսակների					
%	1 (նվազ)	2	3	4	5 (բարձր.)
Ջրամատակարարման համակարգ	19	19.8	19.9	20.5	20.8
Ջրահեռացման համակարգ	20	19	20	19.9	21.1
Ոռոգման համակարգ	17.7	22.1	21.2	19.5	19.5

Համաձայն բյուջետավորման վերաբերյալ տեղեկատվության, կառավարությունն ամենամեծ ներդրումները կատարել է ոռոգման համակարգում: Սակայն ոռոգման համակարգից օգտվող բնակչության մասնաբաժինը բավական փոքր է (ամենափոքրը ջրային ոլորտի ծրագրերի մեջ) և կազմում է ընդամենը 25%: Միաժամանակ, հարցման արդյունքները ցույց են տալիս, որ այս ծրագրի շահառուների մեծ մասը ներկայացնում են 2-րդ և 3-րդ քվինտիլները, ինչը և՛ դրական է, և՛ բացատրելի:


Ներդրումների ամենափոքր չափաբաժինը կատարվել է ջրահեռացման համակարգերում, չնայած այն փաստին, որ տնային տնտեսությունների 74.4%-ը նշել են, որ հանդիսանում են ջրահեռացման համակարգի օգտագործողներ:

Ծառայությունների սպառման տեսանկյունից ամենամեծ մասնաբաժինը խմելու ջրի մատակարարման ոլորտում է՝ 91.4%:


Օգուտների բաշխման մոդելներն ըստ ծրագրերի բավականին տարբերվում են: Ըստ քվինտիլների արագ աճը և հետագա դանդաղ նվազումը տրամաբանական է, քանի որ սա բնակչության այն հատվածն է, որը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ (ցածր միջին և միջին քվինտիլներ):



Ջրահեռացման ծրագրում առկա օգուտի բաշխման մոդելը վերլուծության տվյալ փուլում դժվար է բացատրել: Փաստացի, այս ծրագիրը համեմատաբար ցածր գերակայություն ունի և դժվար կլինի ռեսուրսներ ներդնել՝ Հայաստանում օգուտների բաշխման նման վարքի պատճառը հիմնավորելու և գոյություն ունեցող քաղաքականությունների փոփոխություն խորհուրդ տալու համար:



Ամենահետաքրքիր մոդելը արձանագրվել է խմելու ջրի մատակարարման ծրագրի համար: Իսկ ամենակարևոր բացահայտումը ոչ թե օգուտի բաշխման մոդելն է (այն փաստացի ակնկալվում էր մեր կողմից), այլ՝ դրանից բխող եզրակացությունները կամ առաջարկությունները:



Ցանկացած ոլորտում սուբսիդավորում ունենալու գաղափարը հիմնավորվում է շահագործող ընկերությունների եկամուտների դեֆիցիտը փոխհատուցելու կառավարության անհրաժեշտությամբ, ինչը պայմանավորված է մատուցվող ծառայությունների գների/վճարների շուկայականից ավելի ցածր լինելու փաստով: Իսկ կառավարության կողմից ցածր գներ սահմանելու հիմնավորումը (որպես հիմնական նպատակ) ամենաաղքատ տնային տնտեսություններին աջակցելն է՝ բարձր կենսամակարդակի համար անհրաժեշտ նորմալ ծավալներով հատուկ ծառայությունների մատուցելու համար: Երկրորդական նպատակ կարող է հանդիսանալ մասնավոր ընկերություններին շահագրգռելը կամ ստիպելը՝ կիրառել ստանդարտ գների քաղաքականություն ողջ երկրի համար՝ անկախ յուրահատուկ ռեզիդնալ տարբերություններից և ներդրումային կարիքներից: Օգուտների բաշխման վերլուծությունից տեսնում ենք, որ կառավարությունը փաստորեն չի կիրառում սուբսիդիաների օգտագործման առաջին հիմնավորումը, այսինքն՝ ամենաաղքատ ընտանիքների աջակցությունը: Վերը ներկայացված մոդելը ցույց է տալիս, որ ավելի հարուստ քվինտիլները, փաստացի, սուբսիդավորման սխեմայից ստանում են ավելին, քան ամենաաղքատները: Այսպիսով, սուբսիդավորվող ջրամատակարարման համակարգ ունենալու ողջ գաղափարը հակառակն է շրջվել և բնակչության բոլոր հատվածներից հավաքագրված հարկերը հետ են բաշխվում նրանց, **սակայն** հարուստ հատվածներին ավելի շատ է բաժին ընկնում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԾԱԳԱԾ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կրթության ոլորտում Օգուտների Բաշխման Վերլուծության իրականացման ընթացքում ի հայտ են եկել հետևյալ բարդությունները.

1. **Դպրոցներում ընդգրկվածության գնահատված մակարդակը:** Բնակչության ընդհանուր թվաքանակի և ընտրանքի ծավալի վրա հիմնված՝ դպրոցներում ընդգրկվածության գնահատված մակարդակներն ըստ ծախսային քվինտիլների և կրթական մակարդակների հաշվարկելիս ստացվել է, որ յուրաքանչյուր կրթական մակարդակում ընդհանուր ընդգրկվածությունը՝ առաջին կետում նշված ամսաթվերի համար, միջինում 20%-ով բարձր է, քան ընդգրկվածության առկա փաստացի մեծությունը: Ընդգրկվածության փաստացի և գնահատված մեծությունների միջև անհամապատասխանություններից խուսափելու նպատակով, միավորի սուբսիդիայի հաշվարկի համար օգտագործված՝ ըստ ուսումնական տարիների կրթական մակարդակներում փաստացի ընդգրկվածությունների մեծությունները բաշխվել են քվինտիլների միջև՝ հիմնվելով դրանց՝ որոշակի կրթական մակարդակում ընդհանուր ընդգրկվածության մեջ ունեցած տոկոսային մասնաբաժնի վրա:
2. **Ընտրանքի տնային տնտեսությունների ծախսերը:** Ընտրանքի տնային տնտեսությունների՝ ըստ կրթական մակարդակների և ծախսային քվինտիլների ծախսերի արդյունքները 2008 և 2009թթ. համար դժվար էր բացատրել, քանի որ քվինտիլների երկայնքով ծախսերի մեջ բացահայտ միտում չկար՝ երկու տարիների համար. ամենաաղքատները և ամենահարուստները կրթության վրա ծախսում էին համարյա նույն գումարները, իսկ քվինտիլների միջև ծախսերի մեծությունների շեղումները բավականին տարօրինակ էին:

Որոշ առողջապահական ծառայությունների մասով նկատվել է նաև օգուտի բաշխման չբացատրված մոդել, որտեղ 4-րդ քվինտիլի դրսևորած վարքը հակասում էր մյուս քվինտիլներում արձանագրված ընդհանուր միտումներին:

ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀՆԱԻՐԱՎՈՐ ԸՆԴԱՑՆՈՒՄ

Սույն ՕԲ վերլուծության ամենաառանցքային եզրահանգումները կատարվել են կրթության և ջրային ոլորտներում: Օրինակ. ջրային ոլորտում կատարված բացահայտումը ցույց է տալիս, որ խմելու ջրի մատակարարման համակարգի օգուտների բաշխումը միտված չէ դեպի աղքատները: Իհարկե, ջրամատակարարման համակարգն ինքնին չպետք է միտված լինի դեպի աղքատները, քանի որ քաղաքականությունն ինքը ուղղված չէ աղքատությանը: Սակայն, կառավարությունն ընտրել է միջամտությունների, այսինքն՝ ջրամատակարարման համակարգի սուբսիդավորման (ընթացիկ կամ կապիտալ ծախսերի) մեթոդը, որը (ըստ իր սահմանման) միտված է դեպի աղքատները, քանի որ փոխհատուցում է ջրամատակարարման մասնավոր ընկերություններին՝ խմելու ջրի մատակարարման շուկայականից ցածր գների դիմաց: Ինչպես կարելի է տեսնել խմելու ջրի մատակարարման օգուտների բաշխման գծապատկերում, առկա է շատ ուժեղ

կորրելյացիա ($R^2=0.96$) աղքատության մակարդակի և ջրի սպառման միջև: Քվինտիլների միջև շեղումներն այնքան էլ մեծ չեն, սակայն ապացուցում են այն փաստը, որ սուբսիդավորման քաղաքականությունն ավելի շահավետ է բնակչության միջին և ավելի հարուստ խավերի համար:

Սույն հաշվետվությունը չի կարող լիովին հենվել ՕԲՎ-ի՝ որպես գոյություն ունեցող քաղաքականությունները փոխելու՝ կառավարությանը տրվող խորհուրդի հիմքի վրա (քանի որ խմելու ջրի մատակարարման համակարգի սուբսիդավորման համար կարող են լինել այլ՝ ոչ ամբողջովին տնտեսական պատճառներ, ինչպիսիք են՝ ենթակառուցվածքների զարգացման համարժեք բաշխման խթանումը և այլն), բայց այն ուշադրություն է հրավիրում բարձրացված խնդրի վրա: Այդպիսով, հնարավոր ընդլայնումներից մեկը կարող է լինել ոլորտի հետագա վերլուծությունը և պետական մարմիններին համարժեք խորհրդատվության մատուցումը՝ քաղաքականության մշակման և այլընտրանքների ուղղությամբ: Որպես հնարավոր լուծում կարելի է դիտարկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջամտությունների համակարգումը և ճշգրտումը՝ եզրակացությանը համարժեքորեն արձագանքելու նպատակով: Մեկ այլ հնարավորություն կարող է հանդիսանալ ջրամատակարար ընկերությունների սուբսիդավորման տնտեսական և ոչ տնտեսական պատճառների ավելի խիստ տարբերակումը և, կատարված եզրահանգումները ներառելու նպատակով, սուբսիդավորման բանաձևի հնարավոր ճշգրտումը, ինչպես նաև ոչ տնտեսական պատճառների բանաձևի հատուկ գործոնների ավելի լայն կիրառումը: Վերը նշված բոլոր քայլերը կարող են ազատել որոշակի սուբսիդավորման միջոցներ և դրանք վերաբաշխել ամենաշատ համապատասխանող քվինտիլներին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջամտությունների միջոցով:

Ամեն դեպքում, սա այն կարևոր ոլորտն է, որտեղ սույն հաշվետվության արդյունքները կարող են օգնել ՀՀ կառավարությանը՝ ջրամատակարարման ծրագրերում առկա քաղաքականությունները վերախմաստավորելու և, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջամտության մեխանիզմների (աղքատներին ուղղված ավելի թիրախավորված գործիքներով) հնարավոր օգտագործման միջոցով, աղքատների “սուբսիդավորման” այլ ձևեր կիրառելու գործում:

Վերը բերված պատճառները լիովին կիրառելի չեն ջրային ոլորտի այլ ծրագրերի համար: Մասնավորապես, ոռոգման ծրագրի օգուտների բաշխման մոդելը հիմնականում միտված է դեպի 2-րդ և 3-րդ քվինտիլները, ինչը շատ ուժեղ կորրելացված է այն ենթադրությունների հետ, թե ո՞ր քվինտիլներն են ավելի շատ զբաղված գյուղատնտեսությունում և այդպիսով սպառում ոռոգման ռեսուրսների մեծ մասը: Ամեն դեպքում, գոյություն ունեցող մոդելը (ի տարբերություն խմելու ջրի մատակարարման դեպքի) խնդիրներ չի առաջացնում և նախազգուշական ուղերձներ չի պարունակում, որոնք անհրաժեշտ է հաղորդել կառավարությանը՝ քաղաքականությունների ճշգրտման նպատակով:

Կրթական ոլորտում սահմանվել են մի քանի դեպքեր, որտեղ կառավարությունը կարող է եզրահանգումները համարել չափազանց կարևոր՝ քաղաքականության ճշգրտման

միջոցառումներ սկսելու համար: Ամենակարևորը բարձրագույն կրթության համակարգում ավելի հարուստ քվինտիլների զգալիորեն ավելի բարձր ընդգրկվածությունն է (օգուտի բաշխումը): Սա միայն կրթական ոլորտին առնչվող խնդիր չէ, սակայն նման պրակտիկան կստեղծի արատավոր շրջան՝ աղքատների՝ աղքատ մնալու համար (մենք նաև ակնկալում ենք, որ ավագ դպրոցների վերջին բարեփոխումների՝ լիարժեք գործի դնելուց հետո այն կաճի): Սույն հաշվետվությունը չի պնդում, որ կրթության ոլորտում իրականացվող որևէ քաղաքականություն կհավասարեցնի օգուտների բաշխումն ըստ քվինտիլների, սակայն մենք ուշադրություն ենք հրավիրում՝ գոյություն ունեցող հսկա անջրպետը (ամենացածր և ամենաբարձր քվինտիլների միջև տարբերությունը 4 անգամ է) կրճատելու նպատակով:

ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՊԼԱՆՆԵՐ

Սույն վերլուծության եզրահանգումները կփոխանցվեն հիմնական շահառուներին, ՀՀ կրթության և գիտության նախարարությանը, ՀՀ առողջապահության նախարարությանը և ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեին:

Այդ հաղորդակցության գլխավոր նպատակն է փոխանցել լրացուցիչ տեղեկատվություն՝ ըստ սոցիալական խմբերի (ծախսային առումով) օգուտների բաշխման վերաբերյալ, որպեսզի քաղաքականություն մշակողները կարողանան օգտագործել այս տեղեկատվությունը՝ հետագա քաղաքականության մշակման համար:

Հաղորդակցությունը կիրականացվի ՄԺԾԾ գործընթացին մոտ ընկած ժամանակահատվածում, որը տեղի է ունենում յուրաքանչյուր տարվա հունվար-մայիս ամիսներին՝ որպես տարեկան բյուջետավորման գործընթացի ռազմավարական փուլ: Այս հաշվետվությունը ՄԺԾԾ կազմման փուլում հաղորդելու նպատակն է Հայաստանի կառավարության՝ բյուջեի հետ կապված որոշումների ընդունման շրջափուլում դրա ներառումը: ՄԺԾԾ կազմման ժամանակահատվածն ամենակարևոր (եթե ոչ միակ) փուլն է, երբ կայացվում են քաղաքականությունների վերաբերյալ որոշումները (գոյություն ունեցող քաղաքականությունների ճշգրտումները)՝ տարեկան բյուջեների (միջոցների հատկացման) հետ սերտ փոխկապակցմամբ: Այսպիսով, սա հաղորդակցումն իրականացնելու համար ամենաօպտիմալ փուլն է:

Բացի նշվածից, սույն հաշվետվությունը նաև հաղորդվելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարությանը: Ինչպես արդեն նշվել է, այս նախարարությունն է առաջնային պատասխանատվություն կրում սոցիալական ուղղվածությամբ քաղաքականությունների և երկրում համապատասխան ոլորտային քաղաքականությունների՝ աղքատության հետ կապված համակարգման համար: Այս նախարարությունը կարող է յուրահատուկ կարևորություն ունենալ կրթության, առողջապահության և ջրային ոլորտներում առկա քաղաքականությունների՝ դեպի աղքատներն ուղղվածությունից շեղումների փոխհատուցման համար:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված Ա. Պետական բյուջեի առողջապահության ծրագրեր/ծառայություններ

- I. Արտահիվանդանոցային ծառայություններ/ Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ**
1. Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ
 2. Բարձր ոիսկի խմբերում ընդգրկված բնակչության մոտ հիվանդությունների հայտնաբերման, առողջության գնահատման և բուժման ծառայություններ
 3. Հեմոդիալիզի անցկացման ծառայություններ
 4. Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ
 5. Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններ
 6. Օրթոդոնտոլոգիական բժշկական օգնության ծառայություններ
 7. Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ
 8. Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ
 9. Շտապ բժշկական օգնության ծառայություններ
 10. Լաբորատոր-գործիքային ածտորոշիչ ծառայություններ
 11. Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ
- II. Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ**
1. Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ/արտահիվանդանոցային
 2. Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ/հիվանդանոցային
 3. Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ/հիվանդանոցային
- III. Հիվանդանոցային ծառայություններ**
1. Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ
 2. Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ
 3. Տուբերկուլոզի բժշկական օգնության ծառայություններ
 4. Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ
 5. Մեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ
 6. Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններ
 7. Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ
 8. Վերականգնողական բժշկական օգնության ծառայություններ

9. Ջորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային բժշկական օգնություն և փորձաքննություններ
10. Թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայություններ
11. Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ
12. Առողջապահական հաստատությունների հիմնանորոգում (ԱՆ, ՔՆ)

IV. Հանրային առողջապահական ծառայություններ

1. Հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայություններ
2. Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայություններ
3. Հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման ծառայություն
4. ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման ծառայություններ
5. Վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման ծառայություններ
6. Արյան հավաքագրման ծառայություններ
7. Իմունոկանխարգելման ազգային ծրագրի իրականացման ծառայություններ
8. Առողջապահական հաստատությունների հիմնանորոգում (Վայոց Ձորի մարզպետարան)
9. ՀԲ թոչնագրիայի կանխարգելման ծրագիր

V. Հարբժշկական ծառայություններ և այլ աջակից ծառայություններ

1. Հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհաձախսի փոխհատուցում
2. Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ
3. Դեղաքաղաքականությունից բխող փորձագիտական և մեթոդաբանական ծառայություններ
4. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առողջապահության համակարգի արդիականացման ծրագիր
5. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առողջապահության համակարգի արդիականացման ծրագրում Ճապոնական դրամաշնորհային ծրագիր
6. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող թոչնագրիային հակազդելու ծրագիր
7. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող թոչնագրիային հակազդելու Ճապոնական դրամաշնորհային ծրագիր
8. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առողջապահության համակարգի արդիականացման երկրորդ ծրագիր
9. Դատաբժշկական և գենետիկ ծառայություններ
10. Պաթանատոմիական ծառայություններ
11. Հաշմանդամ երեխաների բժշկական օգնության ծառայություններ
12. Առողջապահության համակարգի զանգվածային տեղեկատվության ծառայություններ
13. Մասնագիտական, խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության ծառայություններ
14. Այլ բուժօգնության և սպասարկման գծով ծառայություններ

15. Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման ծառայություններ
16. Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագիր
17. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող թոչնագրիպին հակազդելու ծրագրի համաֆինանսավորման Ճապոնական դրամաշնորհային ծրագիր
18. Մեծ Բրիտանիայի կառավարության աջակցությամբ Գեղարքունիքի և Տավուշի մարզերի զարգացման ծրագրեր
19. Ներդրումներ առողջապահական կազմակերպություններում բժշկական սարքավորումների և շտապ օգնության մեքենաների ձեռքբերման համար
20. Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված անձանց

VI. Առողջապահության քաղաքականության ձևավորում

1. Գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում

Հավելված Բ: Կրթության ոլորտի օգուտների բաշխման հաշվարկի մանրամասներ

Կրթական հաստատություններում ուսուցման գործընթացի հետ կապված ընթացիկ ծախսերի ֆինանսավորում

	2006			2007			2008			2009		
	Պետության ֆինանսավորմամբ սովորողների թիվը	Ընդամենը ընթացիկ ֆինանսավորում (000 ՀՀԴ)	Մեկ սովորողի ֆինանսավորում (000 ՀՀԴ)	Պետության ֆինանսավորմամբ սովորողների թիվը	Ընդամենը ընթացիկ ֆինանսավորում (000 ՀՀԴ)	Մեկ սովորողի ֆինանսավորում (000 ՀՀԴ)	Պետության ֆինանսավորմամբ սովորողների թիվը	Ընդամենը ընթացիկ ֆինանսավորում (000 ՀՀԴ)	Մեկ սովորողի ֆինանսավորում (000 ՀՀԴ)	Պետության ֆինանսավորմամբ սովորողների թիվը	Ընդամենը ընթացիկ ֆինանսավորում (000 ՀՀԴ)	Մեկ սովորողի ֆինանսավորում (000 ՀՀԴ)
<u>Միջնակարգ ընդհանուր կրթություն</u>	467,065	45,141,897	97	447,671	52,094,843	116	420,239	59,754,771	142	403,571	76,042,552	188
1. Տարրական դպրոց	121,482	12,188,312	100	123,701	14,586,556	118	117,488	15,857,317	135	110,177	20,672,265	188
2. Միջին դպրոց	244,061	23,022,368	94	227,523	26,568,370	117	216,536	30,009,407	139	207,332	39,526,445	191
3. Ավագ դպրոց	101,522	9,931,217	98	96,447	10,939,917	113	86,215	13,888,047	161	86,062	15,843,842	184
<u>Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթություն</u>	24,388	2,771,042	114	25,232	3,410,663	135	25,485	3,874,187	152	25,640	5,035,621	196
1. Նախնական մասնագիտական կրթություն	3,236	1,014,486	313	4,008	1,282,477	320	4,176	1,485,613	356	4,483	1,984,319	443
2. Միջին մասնագիտական կրթություն	21,152	1,756,556	83	21,224	2,128,186	100	21,309	2,388,573	112	21,157	3,051,302	144
<u>Բարձրագույն և հետբուհական կրթություն</u>	21,987	4,954,129	225	22,002	5,257,579	239	22,048	6,659,411	302	22,282	7,682,329	345
1. Բարձրագույն մասնագիտական կրթություն	20,688	4,575,158	221	20,748	4,941,524	238	20,878	6,098,024	292	21,199	7,082,071	334

(բակալավրիատ և մագիստրատուրա)												
2. Հետբուհական մասնագիտական կրթություն	1,299	378,971	292	1,254	316,055	252	1,170	561,387	480	1,083	600,258	554
Ընդամենը կրթության ֆինանսավորում	513,440	52,867,068	103	494,905	60,763,085	123	467,772	70,288,369	150	451,493	88,760,502	197

Միավոր ծախսերն ըստ ծրագրերի. Ընդհանուր բյուջետային ֆինանսավորում

	2006			2007			2008			2009		
	Պետության ֆինանսավորմամբ սովորողների թիվը	Ընդամենը ընթացիկ ֆինանսավորում (000 ՀՀԴ)	Մեկ սովորողի ֆինանսավորում (000 ՀՀԴ)	Պետության ֆինանսավորմամբ սովորողների թիվը	Ընդամենը ընթացիկ ֆինանսավորում (000 ՀՀԴ)	Մեկ սովորողի ֆինանսավորում (000 ՀՀԴ)	Պետության ֆինանսավորմամբ սովորողների թիվը	Ընդամենը ընթացիկ ֆինանսավորում (000 ՀՀԴ)	Մեկ սովորողի ֆինանսավորում (000 ՀՀԴ)	Պետության ֆինանսավորմամբ սովորողների թիվը	Ընդամենը ընթացիկ ֆինանսավորում (000 ՀՀԴ)	Մեկ սովորողի ֆինանսավորում (000 ՀՀԴ)
Միջնակարգ ընդհանուր կրթություն	467065	65595196	140	447671	77511613	173	420239	86317601	205	403571	107425519	266
1. Տարրական դպրոց	121482	18051921	149	123701	22382147	181	117488	23989315	204	110177	29139324	264
2. Միջին դպրոց	244061	33211459	136	227523	39046286	172	216536	41747363	193	207332	53838105	260
3. Ավագ դպրոց	101522	14331816	141	96447	16083180	167	86215	20580924	239	86062	24448090	284
Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթություն	24388	2842042	117	25232	3508840	139	25485	6751168	265	25640	5636619	220
1. Նախնական մասնագիտական կրթություն	3236	1014486	313	4008	1292177	322	4176	2874659	688	4483	2096833	468
2. Միջին մասնագիտական կրթություն	21152	1827556	86	21224	2216663	104	21309	3876509	182	21157	3539786	167

<u>Բարձրագույն և հետբուհական կրթություն</u>	21987	5302409	241	22002	5498406	250	22048	6838492	310	22282	8018809	360
1. Բարձրագույն մասնագիտական կրթություն (բակալավրիատ և մագիստրատուրա)	20688	4923438	238	20748	5175607	249	20878	6277105	301	21199	7418551	350
2. Հետբուհական մասնագիտական կրթություն	1299	378971	292	1254	322799	257	1170	561387	480	1083	600258	554
<u>Ընդամենը կրթության ֆինանսավորում</u>	513440	73739647	144	494905	86518860	175	467772	99907261	214	451493	121080946	268

Ընդգրկվածության մակարդակի գնահատում ըստ ծախսային քվինտիլների և կրթական մակարդակների (Փաստացի ընդգրկվածության ցուցանիշների հիման վրա)

2008	Քվինտիլ 1	Քվինտիլ 2	Քվինտիլ 3	Քվինտիլ 4	Քվինտիլ 5	Ընդամենը
Միջնակարգ ընդհանուր կրթություն	103059	93771	90323	79022	54064	420239
1. Տարրական դպրոց	31830	28787	26212	15915	14745	117488
2. Միջին դպրոց	55662	46276	45403	43875	25321	216536
3. Ավագ դպրոց	15567	18708	18708	19232	13998	86215
Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթություն	4215	5415	7224	5616	3015	25485
1. Նախնական մասնագիտական կրթություն	597	1193	1193	1193	0	4176
2. Միջին մասնագիտական կրթություն	3618	4222	6031	4423	3015	21309
Բարձրագույն և հետբուհական կրթություն	1807	2741	3836	5361	8301	22048
1. Բարձրագույն մասնագիտական կրթություն (բակալավրիատ և մագիստրատուրա)	1807	2508	3836	5127	7599	20878
2. Հետբուհական մասնագիտական կրթություն	0	233	0	234	702	1170
Ընդամենը	109081	101927	101383	89999	65380	467772

2009	Քվինտիլ 1	Քվինտիլ 2	Քվինտիլ 3	Քվինտիլ 4	Քվինտիլ 5	Ընդամենը
Միջնակարգ ընդհանուր կրթություն	104618	90212	85924	72075	50743	403572
1. Տարրական դպրոց	30237	27751	23195	16361	12633	110177
2. Միջին դպրոց	57797	42888	41512	38531	26605	207332
3. Ավագ դպրոց	16584	19573	21217	17183	11505	86062
Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթություն	4039	6191	6381	6004	3022	25640
1. Նախնական մասնագիտական կրթություն	639	1280	1281	1281	0	4483
2. Միջին մասնագիտական կրթություն	3400	4911	5100	4723	3022	21157
Բարձրագույն և հետբուհական կրթություն	1800	2789	3437	5616	8640	22282
1. Բարձրագույն մասնագիտական կրթություն (բակալավրիատ և մագիստրատուրա)	1800	2519	3347	5435	8098	21199
2. Հետբուհական մասնագիտական կրթություն	0	270	90	181	542	1083
Ընդամենը	110457	99192	95742	83695	62405	451494

Կրթության ծախսերի գծով օգուտների բաշխում (հազար ՀՀԴ) ըստ ծախսային քվինտիլների և կրթական մակարդակների (3Է)

2008	Քվինտիլ 1	Քվինտիլ 2	Քվինտիլ 3	Քվինտիլ 4	Քվինտիլ 5	Ընդամենը
Միջնակարգ ընդհանուր կրթություն	20,946,745.8	19,265,630.9	18,571,542.7	16,299,541.7	11,234,059.5	86,317,520.7
1. Տարրական դպրոց	6,499,216.0	5,877,880.3	5,352,103.4	3,249,608.0	3,010,711.3	23,989,519.0
2. Միջին դպրոց	10,731,433.6	8,921,846.5	8,753,535.2	8,458,942.3	4,881,797.8	41,747,555.4
3. Ավագ դպրոց	3,716,096.3	4,465,904.1	4,465,904.1	4,590,991.4	3,341,550.4	20,580,446.3
Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթություն	1,069,143.0	1,589,294.2	1,918,385.5	1,625,859.9	548,485.4	6,751,168.0
1. Նախնական մասնագիտական կրթություն	410,960.5	821,232.7	821,232.7	821,232.7	0.0	2,874,658.6
2. Միջին մասնագիտական կրթություն	658,182.5	768,061.5	1,097,152.8	804,627.2	548,485.4	3,876,509.4
Բարձրագույն և հետբուհական կրթություն	543,286.2	865,843.9	1,153,318.1	1,653,743.0	2,621,520.5	6,837,711.8
1. Բարձրագույն մասնագիտական կրթություն (բակալավրիատ և մագիստրատուրա)	543,286.2	754,046.4	1,153,318.1	1,541,465.6	2,284,688.4	6,276,804.7
2. Հետբուհական մասնագիտական կրթություն	0.0	111,797.6	0.0	112,277.4	336,832.1	560,907.1
Ընդամենը	22,559,175.1	21,720,769.1	21,643,246.3	19,579,144.6	14,404,065.4	99,906,400.5

2009	Քվինտիլ 1	Քվինտիլ 2	Քվինտիլ 3	Քվինտիլ 4	Քվինտիլ 5	Ընդամենը
Միջնակարգ ընդհանուր կրթություն	27,716,311.5	24,036,487.2	22,941,240.8	19,213,763.4	13,517,975.9	107,425,778.8
1. Տարրական դպրոց	7,997,002.4	7,339,511.6	6,134,552.7	4,327,114.3	3,341,142.7	29,139,323.8
2. Միջին դպրոց	15,008,204.0	11,136,769.2	10,779,462.0	10,005,382.8	6,908,546.6	53,838,364.5
3. Ավագ դպրոց	4,711,105.2	5,560,206.3	6,027,226.1	4,881,266.3	3,268,286.6	24,448,090.5
Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթություն	867,734.7	1,420,355.5	1,452,444.9	1,389,368.9	505,612.0	5,635,515.9
1. Նախնական մասնագիտական կրթություն	298,879.4	598,694.2	599,161.9	599,161.9	0.0	2,095,897.5
2. Միջին մասնագիտական կրթություն	568,855.3	821,661.3	853,282.9	790,206.9	505,612.0	3,539,618.4
Բարձրագույն և հետբուհական կրթություն	629,906.7	1,031,168.1	1,221,159.4	2,002,288.3	3,134,286.1	8,018,808.6
1. Բարձրագույն մասնագիտական կրթություն (բակալավրիատ և մագիստրատուրա)	629,906.7	881,519.4	1,171,276.5	1,901,968.2	2,833,880.1	7,418,550.8
2. Հետբուհական մասնագիտական կրթություն	0.0	149,648.8	49,882.9	100,320.1	300,406.0	600,257.8
Ընդամենը	29,213,952.9	26,488,010.8	25,614,845.1	22,605,420.5	17,157,874.0	121,080,103.3

Կրթության ծախսերի գծով օգուտների բաշխում (%-ով) ըստ ծախսային քվինտիլների և կրթական մակարդակների (3Է)

2008	Քվինտիլ 1	Քվինտիլ 2	Քվինտիլ 3	Քվինտիլ 4	Քվինտիլ 5	Ընդամենը
Միջնակարգ քնդհանուր կրթություն	24%	22%	22%	19%	13%	100%
1. Տարրական դպրոց	27%	25%	22%	14%	13%	100%
2. Միջին դպրոց	26%	21%	21%	20%	12%	100%
3. Ավագ դպրոց	18%	22%	22%	22%	16%	100%
Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթություն	16%	24%	28%	24%	8%	100%
1. Նախնական մասնագիտական կրթություն	14%	29%	29%	29%	0%	100%
2. Միջին մասնագիտական կրթություն	17%	20%	28%	21%	14%	100%
Բարձրագույն և հետբուհական կրթություն	8%	13%	17%	24%	38%	100%
1. Բարձրագույն մասնագիտական կրթություն (բակալավրիատ և մագիստրատուրա)	9%	12%	18%	25%	36%	100%
2. Հետբուհական մասնագիտական կրթություն	0%	20%	0%	20%	60%	100%
Ընդամենը	23%	22%	22%	20%	14%	100%

2009	Քվինտիլ 1	Քվինտիլ 2	Քվինտիլ 3	Քվինտիլ 4	Քվինտիլ 5	Ընդամենը
Միջնակարգ քնդհանուր կրթություն	26%	22%	21%	18%	13%	100%
1. Տարրական դպրոց	27%	25%	21%	15%	11%	100%
2. Միջին դպրոց	28%	21%	20%	19%	13%	100%
3. Ավագ դպրոց	19%	23%	25%	20%	13%	100%
Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթություն	15%	25%	26%	25%	9%	100%
1. Նախնական մասնագիտական կրթություն	14%	29%	29%	29%	0%	100%
2. Միջին մասնագիտական կրթություն	16%	23%	24%	22%	14%	100%
Բարձրագույն և հետբուհական կրթություն	8%	13%	15%	25%	39%	100%
1. Բարձրագույն մասնագիտական կրթություն (բակալավրիատ և մագիստրատուրա)	8%	12%	16%	26%	38%	100%
2. Հետբուհական մասնագիտական կրթություն	0%	25%	8%	17%	50%	100%
Ընդամենը	24%	22%	21%	19%	14%	100%

Հավելված Գ: Առողջապահության վրա տնային տնտեսություններ ծախսեր (ըստ հարցման արդյունքների)

Տնային տնտեսությունների ծախսերը 2009թ., ՀՀ դրամ (1600 տնային տնտեսություն)

Քվիտիլներ	Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	Հիվանդանոցային ծառայություններ	Հանրային առողջապահական ծառայություններ	Հարբժշկական և այլ հարակից ծառայություններ	Ընդամենը
1	1079020	106000	1042000	5000	0	2232020
2	2885700	302000	1445000	110000	0	4742700
3	3332500	190000	4285500	110000	0	7918000
4	6424000	870000	5202500	155000	0	12651500
5	8984590	570000	15520098	504000	150000	25728688
Ընդամենը	22705810	2038000	27495098	884000	150000	53272908

Տնային տնտեսությունների ծախսերը 2009թ., % (1600 տնային տնտեսություն)

Քվիտիլներ	Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	Հիվանդանոցային ծառայություններ	Հանրային առողջապահական ծառայություններ	Հարբժշկական և այլ հարակից ծառայություններ	Ընդամենը
1	5%	5%	4%	1%	0%	4,2%
2	13%	15%	5%	12%	0%	8,9%
3	15%	9%	16%	12%	0%	14,9%
4	28%	43%	19%	18%	0%	23,7%
5	40%	28%	56%	57%	100%	48,3%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%

Տնային տնտեսությունների ծախսերը 2008թ., ՀՀ դրամ (1600 տնային տնտեսություն)

Քվիտտիներ	Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	Հիվանդանոցային ծառայություններ	Հանրային առողջապահական ծառայություններ	Հարբժշկական և այլ հարակից ծառայություններ	Ընդամենը
1	1 763 000	235 000	1 938 000	615 000	0	4 551 000
2	3 070 000	585 000	2 068 000	0	0	5 723 000
3	2 426 800	1 078 000	5 452 500	160 000	0	9 117 300
4	4 969 500	491 000	9 542 500	3 160 000	0	18 163 000
5	7 129 000	380 000	15 688 000	385 000	600 000	24 182 000
Ընդամենը	19 358 300	2 769 000	34 689 000	4 320 000	600 000	61 736 300

Տնային տնտեսությունների ծախսերը 2008թ., % (1600 տնային տնտեսություն)

Քվիտտիներ	Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	Հիվանդանոցային ծառայություններ	Հանրային առողջապահական ծառայություններ	Հարբժշկական և այլ հարակից ծառայություններ	Ընդամենը
1	9%	8%	6%	14%	0%	7,4%
2	16%	21%	6%	0%	0%	9,3%
3	13%	39%	16%	4%	0%	14,8%
4	26%	18%	28%	73%	0%	29,4%
5	37%	14%	45%	9%	100%	39,2%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%

Հավելված Դ ՕԲՎ աղյուսակներ GDN ծրագրի դասակարգմամբ (միջազգային համադրության համար)

Դպրոցում ընդգրկված մեկ ուսանողին հասնող կառավարության հատկացում (1E), 2008թ.

<i>կրթություն</i>	Միավոր հատկացում (հազ. դրամ)
Միջնակարգ ընդհանուր կրթություն	204
Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթություն	212
Բարձրագույն և հետբուհական կրթություն	247

Կրթության ծառայություններից օգտվելու աստիճանի գնահատում ըստ քվինտիլների ու ծրագրերի (2E)

<i>կրթություն</i>	ճախսային քվինտիլ				
	1 (նվազ.)	2	3	4	5 (բարձր.)
Միջնակարգ ընդհանուր կրթություն	34488	28658	26230	16515	14086
Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթություն	69733	67201	66360	65416	41333
Բարձրագույն և հետբուհական կրթություն	5207	7133	9895	10067	11031

Կրթության ծառայություններից օգտվելու աստիճանի գնահատում (%) ըստ քվինտիլների ու ծրագրերի (3E)

<i>կրթություն</i>	ճախսային քվինտիլ				
	1 (նվազ.)	2	3	4	5 (բարձր.)
Միջնակարգ ընդհանուր կրթություն	29%	24%	22%	14%	12%
Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթություն	22%	22%	21%	21%	13%
Բարձրագույն և հետբուհական կրթություն	11%	16%	21%	23%	29%
Ընդամենը	29%	24%	22%	14%	12%